



Մամլո ինֆորմացիոն

Հասցե՝ ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
Էլ փոստ՝ info@sif.am
Հեռ.՝ (060) 654 013, (010) 52 15 94
Մամլո քարտուղար՝ Արամայիս Շահբեկյան
Հեռ.՝ (060) 654 011, (041) 51 14 11

Աշխատանքային գրքույկների թվայնացման գործընթացն առաջիկայում կմեկնարկի

Երևան, 2017թ. Ապրիլի 18: 2017թ. հունվարի մեկից աշխատանքային գրքույկները դուրս են եկել գործածությունից:

Ինչպես արդեն տեղեկացրել էինք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը միջոցներ է ձեռնարկել անհատ քաղաքացիների և գործատուների մոտ գտնվող **աշխատանքային գրքույկների թվայնացումն** ապահովելու և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու ուղղությամբ:

ՀՀ Կառավարության համապատասխան որոշումների հիման վրա **առաջիկայում կմեկնարկի բուն թվայնացման գործընթացը:**

Գործատուներին վստահեցնում ենք, որ նախապատրաստական աշխատանքներն ընթացքի մեջ են և անհանգստանալու որևէ առիթ չկա: Մինչ համապատասխան աշխատանքային գրքույկների ներկայացումը, Ծառայությունն իր տարածքային ստորաբաժանումների միջոցով կապ կհաստատի յուրաքանչյուր գործատուի հետ՝ ընթացքը սահուն ապահովելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ **գործատուները**, մինչև իրենց մոտ վարվող աշխատանքային գրքույկները Ծառայության տարածքային բաժին ներկայացնելը, աշխատանքային գրքույկում լրացված վերջին էջից հետո **պետք է նշեն** աշխատանքային գրքույկի լրացված **բոլոր էջերի թիվը և ստորագրեն** (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքեն)՝ նշելով ստորագրողի և կնքողի զբաղեցրած պաշտոնը, անունը և ազգանունը (ՀՀ Կառավարության որոշում 18.08.2016 N 882-Ն):

Թվայնացման արդյունքում էապես կբարելավվի կենսաթոշակային և սոցիալական այլ ծառայությունների որակն ու հասցեականությունը, ինչպես նաև կնվազեն առկա բազմաթիվ ռիսկեր, այդ թվում՝ կոռուպցիոն:

###